Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 2
ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նիստի

ք. Եղեգնաձոր 07.07.2016թ.

Մարզխորհրդի նիստը նախագահում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանը
Քարտուղարում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Հ. Կարապետյանը

Մարզխորհրդի նիստին մասնակցում են՝ մարզպետի տեղակալները, ՀՀ ՏԿ և զարգացման նախարարի տեղակալ Կ. Իսախանյանը, տարածքային զինկոմներ՝ Ա. Սարգսյանը և Հ. Մելքոնյանը, համայնքների ղեկավարները, աշխատակազմի քարտուղարները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, նիստին հրավիրված ու մասնակցում են նաև՝ մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ ու ԶԼՄ ներկայացուցիչներ, ՀԿ-ների նախագահներ:

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1.,,2015թ ձմեռային զորակոչի արդյունքների և 2016թ ամառային զորակոչի խնդիրների մասին,,:

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքային զինկոմներ Ա Սարգսյան, Հ. Մելքոնյան /

2. ,,2016թ առաջին կիսամյակին համայնքային բյուջեների ամրագրված սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը,,:

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Շ. Վարդանյան/

3. ,,Բերքհավաքի և կերերի կուտակման աշխատանքների ընթացքը մարզի համայնքներում,,

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ. Ներսիսյան/

4.,,2016թ երկրորդ եռամսյակում մարզի մի շարք համայնքներում իրականացված վարչական հսկողության մասին,,:

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ն. Սիմոնյան/

5. ,,Վերջին շրջանում ՀՀ նորմատիվ և գերատեսչական իրավական ակտերում կատարված փոփոխությունների մասին,,

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ն. Մաղաքյան/

Հայտարարություններ

1. ,,2016թ առաջին կիսամյակում մարզում իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն,,

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Հովսեփյան/

2. ,, Աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության 2016թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը,,

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Ղազարյան/

3. ,,2016թ մարզի հողային հաշվեկշռի կազմման մասին,,

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Մ. Մեսրոպյան/

4. ,,ՀՀ – ում լեյշմանիոզի դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների մասին,,

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Ս. Շահբազյան/

5. ,,Համայնքներում իրականացվող սոցիալական ծրագրերի մասին,,

/Զեկ. Եղեգնաձորի զբաղվածության մարզային կենտրոնի տնօրեն Ժ. Սահակյան/

6. ,,Անասնաբուժասանիտարիայի, բուսասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության ոլորտի ծառայություն,, ՊՈԱԿ-ի կողմից մարզում իրականացված աշխատանքների մասին,,

/Զեկ. ԱԲՍԱ ծառայության ՊՈԱԿ-ի տնօրեն Խ. Եղյան/

7. ,,ՀՀ Բնապահպանության նախարարության բնապահպանական տեսչության Վայոց ձորի տարածքային բաժնի 2016թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների մասին,,

/Զեկ. ԲՊՏ Վայոց ձորի ՏԲ պետ Վ. Գրիգորյան/

8.,,Վայոց ձորի անտառտնտեսություն,, մասնաճուղի 2016թ. առաջին կիսամյա Կի աշխատանքների մասին հաղորդում..

/Զեկ. Վայոց ձորի անտառտնտեսության մասնաճուղի տնօրեն Մ. Հարությունյան/

Օրակարգի առաջին ,, 2015 թ ձմեռային զորակոչի արդյունքների և 2016թ ամառային զորակոչի խնդիրների մասին ,, զեկուցումներով հանդես եկան ՀՀ Վայոց ձորի Եղեգնաձորի և Վայքի տարածքային զինկոմներ՝ մայոր Ա. Սարգսյանը և մայոր Հ. Մելքոնյանը, վերջիններս նշեցին, որ ձմեռային զորակոչի նախատեսված պլան- առաջադրանքները հաջողությամբ կատարվել և գերակատարվել են:Ինչ վերաբերվում է ամառային զորակոչին ապա այն հանրապետությունում մեկնարկեց ս/թ հուլիսի 1-ից, իսկ մարզում՝ հուլիսի 5-ից,զորակոչն ընթանում է կազմակերպված հանդիսավոր պայմաններում:Այնուհետև բանախոսները անդրադարձան զորակոչիկների և զինապարտների համայնքներում իրականացվող հաշվառմանը, հորդորեցին համայնքների ղեկավարներին և աշխատակազմերի քարտուղարներին մշտապես զբաղվել վերջիններիս հաշվառմամբ և շարժի վերահսկմամբ, պատշաճ ձևով լրացնել հաշվառման մատյանները:Անդրադարձան վերադասի կողմից սպասվող առաջիկա ստուգումների, զինապարտների զորամասեր տեղափոխման, զորացրվածների դիմավորման ու աջակցման և այլ հարցերի մասին:

Ամփոփիչ խոսքով հանդես եկավ մարզպետը, նա նշեց, որ մարզային իշխանությունները և տեղական ինքնակառավարման մարմինները միշտ էլ պատվախնդրորեն են մոտեցել զորոկոչին, այս առումով բացառություն չի կազմում նաև 2016թ ամառային զորակոչը, ինչը ընթանում է խիստ

կազմակերպված,տոնական մթնոլորտում՝ դհոլ, զուռնայի երաժշտությամբ,ջերմ բարեմաղթանքներով: *Վերջում հույս հայտնեց, որ բարեհաջող մեկնարկած զորակոչը նույնչափ հաջողված ավարտ կունենա;*

Օրակարգի երկրոդ հարցը ներկայացնելու համար նախագահողը ամբիոնի մոտ հրավիրեց ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսակա և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Շ.Վարդանյանին, վերջինս ''2016թ առաջին կիսամյակին համայնքային բյուջեների ամրագրված սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը'' զեկուցման մեջ նշեց,որ 2016 թվականի վեց ամիսների ընթացքում մարզի 44 համայնքների տեղական բյուջներով եկամուտներ են նախատեսվել 745440.3 հազ. Դրամ, տեղական բյուջեներին ամրագրված եկամուտներից հավաքագրվել է 764611.0հազ. Դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրումը կատարվել է 102.6 %-ով, որից սեփական եկամուտներ՝ նախատեսվել է 230896.0 հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 234521.4հազ. Դրամ, կամ կատարվել է 101.6 %-ով:.

Համահարթեցման կարգով ՀՀ 2016թ. պետական բյուջեից մարզի համայնքներին վեց ամիսների համար նախատեսվել է 477079.9 հազ. Դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Հարկային եկամուտների, տուրքերի և ոչ հարկային եկամուտների գծով վեց ամիսների համար համայնքների բյուջեներով նախատեսվել է՝

- Հողի հարկ՝ 26619.4 հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 26229.4 հազ. Դրամ, կամ կատարվել է 98.5%-ով:
- Գույքահարկ՝ 68432.7 հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 68970.2 հազ. Դրամ, կամ կատարվել է 100.8 %-ով:
- Պետական տուրքեր 2425.0 հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 2706.0հազ. Դրամ, կամ կատարվել է 111.6%-ով:
- Տեղական տուրքեր 11083.9հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 12097.2 հազ. Դրամ, կամ կատարվել է 109.1 %-ով:
- Գույքի վարձակալություն՝ 109805.7հազ. Դրամ, փաստացի հավաքագրվել է 111782.0 հազ. Դրամ, կամ կատարվել է 101.8 %-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում սեփական եկամուտների հավաքագրումը մարզի միջինից բարձր ցուցանիշներով են կաատարել ՝

Համայնքի անվանումը	**Սեփական եկամուտներ տոկոսներով**
Եղեգնաձոր	106.0
Վայք	108.0
Արենի	105.9
Աղնջաձոր	124.8
Արտաբույնք	108.3
Գետափ	123.2
Գլաձոր	102.5
Խաչիկ	102.9
Հորբատեղ	113.7
Հորս	105.6
Մալիշկա	107.1
Շատին	107.2
Չիվա	107.0
Ռինդ	102.2
Վերնաշեն	108.7
Սալլի	105.8
Քարագլուխ	104.0
Ազատեկ	135.1
Ջառիթափ	114.0
Սարավան	102.8

100 տոկոսից ցածր ցուցանիշներով են կատարել՝

Համայնքի անվանումը	Որից՝ Սեփական եկամուտներ տոկոսներով
Ագարակաձոր	96.9
Աղավնաձոր	99.2
Գնիշիկ	83.6
Գողթանիկ	69.1
Ելփին	82.6
Եղեգիս	86.5
Թառաթումբ	79.7
Հերմոն	99.6
Արին	92.7
Արտավան	93.5
Բարձրունի	91.8
Գոմք	68.9
Զեղեա	94.3
Խնձորուտ	92.6
Կարմրաշեն	65.2
Փոռ	74.4
Հերհեր	89.2
Մարտիրոս	85.4
Նոր Ազնաբերդ	52.1
Սերս	73.1

Ստեղծված իրավիճակը արդյունք է այն բանի, որ մարզի վերը նշված համայնքների ղեկավարները լրջորեն չեն զբաղվել եկամուտների հավաքագրման աշխատանքներով: Կարծում եմ, որ մարզի համայնքների ղեկավարները լուրջ հետևություններ պետք է անեն և գործուն միջոցներ ձեռնարկեն սեփական եկամուտների հավաքագրումը յուրաքանչյուր ամիս 100 տոկոսով ապահովելու համար:

Ելնելով վերոգրյալից Մարզխորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին .
   ա/ Ձեռնարկել գործուն միջոցներ իրենց համայնքների բյուջեներին ամրագրված, ինչպես հարկային, այնպես էլ ոչ հարկային սեփական եկամուտների հավաքագրումը 100 %-ով ապահովելու ուղղությամբ:
2. Հանձնարարել մարզպետարանի ֆինանսական եւ սոցիալ տնտեսական զարգացման եւ տարածքային կառավարման վարչություններին ամենօրյա հետեւողական աշխատանքներ իրականացնել համայնքների հետ մեկտեղ տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրումն ամբողջ ծավալով իրականացնելու համար,

շարունակել եկամուտների հավաքագրման ամենօրյա օպերատիվ հաշվառման աշխատանքները:

3. Սույն որոշմանն անրադառնալ տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման տարեկան արդյունքներով:

I.

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ նախագահողը, ով նշեց, որ սեփական եկամուտների հավաքագրումը մարզի համայնքներում ընդհանուր առմամբ կատարվել է 102.6 տոկոսով, սակայն առանձին համայնքներ որոշ հարկատեսակների գծով թերացել են, առաջրկեց վերջիններիս հետ ակտիվացնել տարվող բացատրական և մեթոդական աշխատանքները այն հաշվով, որ ինն ամսվա կտրվածքով առաջադրանքները կատարվեն ամբողջությամբ:

,,Բերքհավաքի և կերերի կուտակման աշխատանքների ընթացքը մարզի համայնքներում,, զեկուցմամբ հանդես եկավ աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ. Ներսիսյանը,որն նշեց գյուղատնտեսական տարվա հաջողությունները մեծ չափով պայմանավորված են թե ինչ ժամկետներում և ինչ որակով են կատարվում գարնան գյուղատնտեսական աշխատանքները, ինչպես նաև ագրոտեխնիկական կանոնների պահպանությունը: Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում, շուկայականից ցածր գներով, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով մարզի հողօգտագործողներին է հատկացվել 463.3տ ազոտական /459.85/, 14.1տ կալիումական/5.75/, 13.1տ ֆոսֆորական/4.0/ պարարտանյութեր, 187000լ դիզելային /64150/ վառելանյութ, 81տ գարնանացան գարու, 1.0տ/ 0.5տ/ առվույտի և 84տ աշնանացան ցորենի սերմացուներ:2015թ դեկտեմբերի 4-ին ՀՀ նախագահի մոտ կայացած հանդիպման ժամանակ տրված հանձնարարականի համաձայն վարելահողերի օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով մարզպետարանում տեղի ունեցած քննարկումների, մարզի հողօգտագործողների նպատակային աշխատանքի, պետական աջակցության ծրագրերի, համայնքների ղեկավարների, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, մարզպետարանի և ջրօգտագործող ընկերությունների համագործակցված աշխատանքի շնորհիվ 2016թ.մարզի ընդհանուր ցանքային տարածությունը կազմել է 6851 հա, որը նախորդ տարվա համեմատ ավել է 1129 հա-ով, այսպիսով վերջին երկու տարիներին մարզի ընդհանուր ցանքային տարածությունները ավելացել են մոտ 2200 հա-ով : Վարչության կողմից համակարգվում է << Եղեգնաձոր >> ՋՕԸ-ի կողմից ոռոգման ջրի անխափան մատակարարման, առաջացած խնդիրների լուծման ու վերացման, միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերանորոգման, ինչպես նաև ոռոգման ջրի մատակարարման պլան ժամանակացույցի խախտումները նվազագույնի հասցնելու աշխատանքները: << Եղեգնաձոր>> ՋՕԸ-ում կազմվել են համապատասխան ծրագրեր առաջացած խնդիրների լուծման ու վերացման, միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերանորոգման աշխատանքները ժամանակին կատարելու և ոռոգման ջրի անխափան մատակարարումն ապահովելու ուղղությամբ:

Եղեգնաձորի պահածոների գործարանի արտադրական հզորությունները թույլ են տալիս տարեկան մթերել շուրջ 1600տ. պտուղ-բանջարեղեն, որը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված պտղի և բանջարեղենի իրացումը արդյունավետ և ժամանակին կազմակերպելու ուղղությամբ /հեռ. 0281-2 22 23/ : Պետական պատվերով նախատեսված ախտորոշիչ՝ բրուցելյոզ հիվանդության նկատմամբ խոշոր և մանր եղջերավոր, իսկ տուբերկուլյոզ հիվանդության նկատմամբ խոշոր եղջերավոր կենդանիների, կանխարգելիչ՝ սիբիրախտ, էմկար, դաբաղ, պաստերելյոզ, խոզերի ժանտախտ, թռչունների կեղծ ժանտախտ հիվանդությունների նկատմամբ միջոցառումները մարզի

համայնքներում օրենքով սահմանված կարգով և ժամկետներում իրականացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության Սննդի անվտանգության պետական ծառայության և <<Անասնաբուժասանիտարիայի, բուսասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության ոլորտի ծառայություն>> ՊՈԱԿ-ի աշխատակիցների միջոցով: Վերոհիշյալ և այլ կարգի անասնաբուժական ծառայությունները / այդ թվում նաև արհեստական սերմնավորումը/ մարզի 44 համայնքներում իրականացվելու են թվով շուրջ 27 անասնաբույժների կողմից: 2016 հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 25026 գլուխ խոշոր եղջերավոր անասուն/+2448/, որից կովեր՝ 9861 /+142/ գլուխ, մանր եղջերավոր՝ 21691 (-3133), խոզեր՝ 2627 գլուխ (+578), թռչուններ՝ 116557 թև (-22882) և մեղվաընտանիք՝ 22570/+715/ փեթակ:

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անվճար մարզին հատկացված 38կգ ռոդիֆակում թունանյութով մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ են իրականացվել մարզի Աղավնաձոր, Արենի, Արփի, Զեդեա, Խնձորուտ, Խաչիկ, Ռինդ, և Ելփին համայնքներում, 470հա հողատարածքի վրա:

ՀՀ գյուղատնտեսութան նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության մասնագետնեի հետ համատեղ մշտական ուսումնասիրություն է իրականացվում բույսերի կարանտին և ոչ կարանտին հիվանդությունների և վնասատուների հայտնաբերման ուղղությամբ:

Մարզում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում ընդգրկվել են Աղնջաձոր, Ռինդ, Վերնաշեն, Զառիթափ Սարավան, Կարմրաշեն, Շատին, Արտաբույնք համայնքները: Նախատեսվում են կատարել արոտների ջրարբիացման, կերախմոցների տեղադրման, ճանապարհների բարեկարագման, ջրընդունիչների և փարախների կառուցման աշխատանքներ, ստեղծված կոոպերատիվներին նախատեսվում է նաև տրամադրել գյուղատնտեսական տեխնիկա/5 և20 % /:

Համաձայն համայնքների ղեկավարների կողմից ներկայացված տեղեկագրի մարզում առկա է 23 հացահատիկահավաք կոմբայն, որից անսարք՝ 3:Առկա գյուղատնտեսական տեխնիկան անհրաժեշտության դեպքում ըստ գոտիականությամբ մեր կողմից համակարգված տեղաշարժելու պայմաններում կարող ենք խնդիրներ չունենալ բերքահավաքը ժամանակին և անկորուստ իրականացնելու աշխատանքներում:

2016 թվականի մայիսի 30-ի դրությամբ ACBA-CREDIT AGRIKOLE բանկի միջոցով մարզի 142 գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 409080 դոլար գյուղատնտեսական նշանակության վարկեր՝ 14-24% տոկոսադրույքով, երեք տարի մարման ժամկետով և 531 գյուղացիական տնտեսությունների 392մլն. դրամ սուբսիդավորված վարկեր 14% տոկոսադրույքով, 2 տարի մարման ժամկետով: կառավարության կողմից սուբսիդավորվում է վարկերի 6%-ը:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Արենիի համայնքի ղեկավար Ս. Սուքիասյանը և Զառիթափի համայնքի ղեկավար Խ.Դավթյանը,առաջինին հետաքրքրում էր վաղ գարնանը ցրտահարությունից տուժած գյուղացիական տնտեսությունների ՀՀ կառավարության կողմից փոխհատուցման տրամադրման հարցը, իսկ երկրորդին սերմացուի գները:

Հարցերին պատասխանեց նախագահողը,նշելով , որ ներկա պահին ՀՀ կառավարության կողմից որևէ գումար մարզին չի հատկացվել, հետևաբար փոխհատուցման մասին խոսք չի կարող լինել, ինչ վերաբերվում է սերմացուի գներին, ապա դրանք անփոփոխ են:

,,**2016թ երկրորդ եռամսյակում մարզի մի շարք համայնքներում իրականացված վարչական հսկողության մասին,, զեկուցմամբ հանդես եկավ աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարշության պետ Ն. Սիմոնյանը, վերջինս նշեց** ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի հրամանով

հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01.02.2016 թվականի որոշման պահանջների համաձայն ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում վարչական հսկողություն է իրականացվել մարզի Աղավնաձորի, Չիվայի, Խաչիկի, Նոր Ազնաբերդի համայնքներում: Իրականացված վարչական հսկողության արդյունքում հայտնաբերվել են թերություններ և խախտումներ ուսամնասիրված բնագավառներում՝

Արտակարգ իրավիճակների բնագավառում Աղավնաձորի, Չիվայի, Խաչիկի, Նոր Ազնաբերդի համայնքներում հայտնաբերվել են հետևյալ թերությունները՝

1.Տարահանման հանձնաժողովի կողմից չի մշակվել տարահանման պլան, չի պահպանվել կառավարության 2011թ թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը սահմանելու մասին» N 1180-Ն որոշման 16-րդ կետի պահանջները:

2. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլան չի մշակվել, չի պահպանվել ՀՀկառավարության 2011թ հունիսի 10-ի <<ՈՒժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին>> N 919-Ն որոշման 3-րդ կետի պահանջները:

3. Համայնքների զարգացման ծրագրերում չեն ներառվել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ, խախտվել է ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշման պահանջները:

Քաղաքաշինության բնագավառում Աղավնաձորի, Խաչիկի, համայնքներում հայտնաբերվել են հետևյալ թերությունները՝

1. Համայնքները չունեն գլխավոր հատակագիծ, խախտվել է ՀՀ ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:

Քաղաքաշինության բնագավառում հայտնաբերված բոլոր թերությունները բխում են գլխավոր հատակագիծ չունենալուց:

Առողջապահության բնագավառում Աղավնաձորի համայնքում հայտնաբերվել է հետևյալ թերությունը՝

- Համայնքի տարածքում թույլատրված տեղադրման վայրերում, ինչպես նաև հանգստի գոտիներում, սպառման թափոնների ժամանակավոր կուտակման համար չեն տեղադրվել կոնտեյներներ, չի պահպանվել բնակավայրերում տարածքային կառավարման մարմինների կողմից «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Հողօգտագործման բնագավառում Աղավնաձորի համայնքում հայտնաբերվել է հետևյալ թերությունը՝

- Համայնքային սեփականություն հանդիսացող արոտները սահմանված կարգով օգտագործման չեն տրամադրվել, Չի պահպանվել ՀՀ Հողային օրենսգրքի 76-80 հոդվածների պահանջները և ՀՀ կառավարության 28.10.2010 թվականի թիվ 1477-Ն որոշման պահանջները:

Պարտադիր լիազորությունների բնագավառում Աղավնաձորի, Չիվայի, Խաչիկի, Նոր Ազնաբերդի համայնքներում հայտնաբերվել են հետևյալ թերությունները՝

1.Համայնքի ավագանին չի հաստատել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, խախտվել է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջը:

2. Համայնքի ավագանին չի հաստատել համայնքի հողերի օգտագործման սխեմաները՝ խախտելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28.1-րդ կետի պահանջը:

3.Չի կատարվել համայնքի սեփականության ամենամյա գույքագրում, գույքագրման փաստաթղթերը ավագանու հաստատմանը չի ներկայացվել: Խախտվել է ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջը:

-Նոր Ազնաբերդի համայնքում համայնքի ղեկավարը չի հաստատել աշխատակազմի գործավարության կարգը, խախտվել է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, գնումների պլանը, gnumner.am կայքում չի տեղակայվել, չի պահպանվել <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման>> մասին թիվ 168 որոշման պահանջները:

Հսկողության ժամանակ արձանագրվել են թերություններ և բացթողումներ <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Թափոնների մասին>>, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>>, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների կատարման ուղղությամբ:

Արձանագրված թերությունների ու խախտումների շտկման վերաբերյալ ՏԻՄ-երին տեղում ցուցաբերվել է մեթոդական և խորհրդատվական օժանդակություն:

Այժմ հետևողական աշխատանքներ են իրականացվում թերություններն ամբողջությամբ վերացնելու ուղղությամբ:

Թերությունների և բացթողումների վերաբերյալ կազմվել են ակտեր, քննարկվել և սահմանվել են ժամկետներ թերությունների վերացման ուղղությամբ:

Կազմված արձանագրությունները և հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման

Օրակարգի 5- րդ ,,Վերջին շրջանում ՀՀ նորմատիվ և գերատեսչական իրավական ակտերում կատարված փոփոխությունների մասին.. հարցը ներկայացրեց աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ն. Մաղաքյանը:

Զեկուցողը նշեց Ներկայացվում են ՀՀ իրավական ակտերում կատարված փոփոխություն-ները, լրացումները և նորությունները, որոնք առնչվում են համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների իրականացմանը:

- 2016թ. հունիսի 17-ի թիվ ՀՕ-101 –Ն օրենքով փոփոխություն է կատարվել

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 84-րդ հոդվածում, որի 14-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրվել է նոր խմբագրությամբ:

«Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր, Տավուշի մարզի Նոյեմբերյան, Այրում, Կողբ, Սյունիքի մարզի Գորիս, Գորայք, Մեղրի, Տեղ համայնքներում 2016 թվականի սեպտեմբերի 18-ին, իսկ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա, Աշոցք, Արփի, Սարապատ, **Վայոց ձորի մարզի Զառիթափ, Ջերմուկ, Վայք, համայնքներում 2016 թվականի հոկտեմբերի 2-ին անցկացնել համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների ընտրություններ՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման կարգով:**

<u>Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը</u> Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լանջանիստ, Շաղափ, Ուրցաձոր, Շիրակի մարզի Ալվար, Աղվորիկ, Ամասիա, Աշոցք, Արդենիս, Արեգնադեմ, Արփենի, Բանդիվան, Բաշգյուղ, Բավրա, Բերդաշեն, Բյուրակն, Գառնառիճ, Գոգիովիտ, Գտաշեն, Զարիշատ, Զորակերտ, Զույգաղբյուր, Թավշուտ, Թորոսգյուղ, Լեռնագյուղ, Ծաղկուտ, Կարմրավան, Կաքավասար, Կրասար, Հարթաշեն, Հողմիկ, Հովտուն, Ձորաշեն, Ղազանչի, Մեծ Սեպասար, Մեղրաշատ, Մուսայելյան, Շաղիկ, Ողջի, Ջրաձոր, Սալուտ, Սարագյուղ, Սարապատ, Սիզավետ, Վարդաղբյուր, Ցողամարգ, Փոքր Սարիար, Փոքր Սեպասար, Սյունիքի մարզի Ագարակ, Ալվանք, Ակներ, Արավուս, Բարձրավան, Գորայք, Գորիս, Գուդեմնիս, Լեհվազ, Լիճք, Խնածախ, Խնձորեսկ, Խոզնավար, Ծղուկ, Կարճևան, Կոռնիձոր, Կուրիս, Հարթաշեն, Մեղրի, Ներքին Խնձորեսկ, Նոնաձոր, Շուռնուխ, Շվանիձոր, Որոտան, Սառնակունք, Սպանդարյան, Վահրավար, Վաղատուր, Վարդանիձոր, Վերիշեն, Տաշտուն, Տեղ, Քարահունջ, Քարաշեն, **<u>Վայոց ձորի մարզի Ազատեկ, Արին, Արտավան, Բարձրունի, Գնդեվազ, Գոմք, Զառիթափ, Զեղեա, Խնձորուտ, Կարմրաշեն, Հերհեր, Մարտիրոս, Նոր Ազնաբերդ, Ջերմուկ, Սարավան, Սերս, Փոռ, Վայք,</u>** Տավուշի մարզի Այրում, Արճիս, Բագրատաշեն, Բաղանիս, Բարեկամավան, Բերդավան, Դեբեդավան, Դեղձավան, Դովեղ, Զորական, Լճկաձոր, Կոթի, Կողբ, Հաղթանակ, Նոյեմբերյան, Ոսկեպար, Ոսկեվան, Պտղավան, Ջուջևան **<u>համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների լիազորությունները համարել դադարած:»:</u>**

Օրենքն ուժի մեջ է մտնում 2016թ. հունիսի 11-ից:

- 2016 թ. մայիսի 26-ին ընդունվել է <<Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող կառուցապատված հողամասերի, ինչպես նաեվ գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչներ սահմանելու մասին>> ՀՀ կառավարության 550-Ն որոշումը, որով սահմանվում են քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող կառուցապատված հողամասերի, բացառությամբ՝ գյուղատնտեսական նշանակության հողամասերի, ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինությունը որոշելու հետևյալ չափորոշիչները՝

1) օտարվող հողամասը սահմանակից է ընդլայնվող հողամասին և օտարվող հողամասի դիրքը կամ ռելիեֆը (երկրի մակերևույթի ամբողջություն) թույլ չի տալիս այն կառուցապատել, կամ օտարվող հողամասը կարող է կառուցապատվել բացառապես օժանդակ շինություններով, բակային ջրավազաններ ու կառույցներ համարվող տնտեսական օգտագործման շինություններով, կցակառույցներով կամ ավտոտնակներով.

2) օտարվող հողամասը սահմանակից է ընդլայնվող հողամասին և օտարվող հողամասի դիրքից, ռելիեֆից կամ չափերից ելնելով՝ քաղաքաշինական նորմերին համապատասխան, այն կարող է օգտագործվել բացառապես ընդլայնվող հողամասի վրա գտնվող շենքի կամ շինության սպասարկման կամ դրանց վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով.

3) օտարվող հողամասը սահմանակից է ընդլայնվող հողամասին և օտարվող հողամասի դիրքի կամ ռելիեֆի առանձնահատկություններից ելնելով՝ ընդլայնվող հողամաս տրանսպորտային միջոցներով մուտք գործելու որևիցե այլընտրանքային հնարավորություն առկա չէ, բացի օտարվող հողամասից կամ ընդլայնվող հողամաս հնարավոր է մուտք գործել բացառապես օտարվող հողամասից.

4) օտարվող հողամասն արտաքին պարագծով առնվազն 60 տոկոսով պարփակված է ընդլայնվող հողամասով.

5) օտարվող հողամասը գերակշիռ մասով սահմանակից է ընդլայնվող հողամասին և սահմանակից է պետական կամ համայնքային սեփականություն չհանդիսացող այլ հողամասի: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված հիմքով հողամաս տրամադրելու դեպքում դրա մասին նախապես իրազեկվում են օտարվող հողամասին սահմանակից այլ սեփականատերերը, եթե այն փաստացի չի տիրապետվում օտարվող հողամասին սահմանակից որևէ հողամասի սեփականատիրոջ կողմից: Այն դեպքում, եթե օտարվող հողամասին սահմանակից այլ հողամասերի սեփականատերերն իրազեկումն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում ցանկություն չեն հայտնում ձեռք բերել օտարվող հողամասը, ապա այն ենթակա է օտարման համապատասխան դիմում ներկայացրած ընդլայնվող հողամասի սեփականատիրոջը: Եթե օտարվող հողամասը ձեռք բերելու ցանկություն են հայտնել մեկից ավելի հողամասերի սեփականատերեր, ապա հողամասը ենթակա է օտարման աճուրդային կարգով.

6) օտարվող հողամասը սահմանակից է ընդլայնվող հողամասին և օտարվող հողամասում այլ անձի կողմից որևէ քաղաքաշինական գործունեության իրականացումը կբերի ընդլայնվող հողամասում գտնվող շենքի կամ շինության շահագործման, անվտանգության, սեյսմակայունության կամ սպասարկման համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերի խախտման կամ ըստ նպատակային (գործառնական) նշանակությամբ օգտագործելու հետագա անհնարինության.

7) օտարվող հողամասը փաստացի սահմանազատված է և տիրապետվում է ընդլայնվող հողամասի սեփականատիրոջ կողմից և օտարվող հողամասում այլ անձի կողմից որևէ քաղաքաշինական գործունեության իրականացումը կբերի ընդլայնվող հողամասում գտնվող շենքի կամ շինության շահագործման, անվտանգության, սեյսմակայունության կամ սպասարկման համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերի խախտման կամ ըստ նպատակային (գործառնական) նշանակությամբ օգտագործելու հետագա անհնարինության.

8) օտարման ենթակա հողամասը սահմանակից է բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող հատուկ և կարևորագույն նշանակության (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության) օբյեկտներով կամ բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) օբյեկտներով կառուցապատվող կամ զբաղեցված հողամասերին և քաղաքաշինական նորմերի ու կանոնների պահանջների պահպանմամբ կարող է այդ օբյեկտների ընդլայնման նպատակով տրամադրվել ընդլայնվող հողամասի սեփականատիրոջը:

Սահմանվում է, որ որոշման 1-ին կետով սահմանված չափորոշիչներից առնվազն մեկի առկայությունը հիմք է, որպեսզի օտարվող հողամասը չդիտվի, որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարման ենթակա հողամաս՝ պայմանով, որ պահպանված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված պահանջները:

4. Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման նպատակով հողամասը կարող է տրամադրվել բացառապես գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար, եթե առկա են նշված որոշման 1-ին կետի 3-րդ կամ 4-րդ ենթակետերով սահմանված հիմքերը:

Մարզխորհրդի բոլոր հարցերի ներկայացումից հետո, **ելույթով հանդես եկավ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Կ.Իսախանայանը**, վերջինս կարևորեց բոլոր հինգ հարցերը: Առաջինի կապակցությամբ նշեց, որ անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում

պահել համայնքների աշխատակազմերի քարտուղարների կողմից վարվող 4 գրանցամատյանները, երկրորդ հարցի կապակցությամբ կարևորեց սեփական եկամուտների ամբողջական հավաքագրումը, մանավանդ, որ ԻՖԱԴ-ի կողմից մարզում իրականացվող աշխատանքներում առանձին համայնքներ՝ համաֆինանսավորման գծով ունեն պարտքեր,ինչ աններելի է, ինչ վերաբերվում է ՀՀ ՏԿ և զարգացման նախարարի հրամանով մարզպետարանի աշխատակազմի կողմից իրականացվող վարչական վերահսկողությանը, ապա բացի թերություններ և բացթողումներ արձանագրելուց, անհրաժեշտ է ներգործուն միջոցառումներ իրականացնել դրանք շտկելու և բացառելու նպատակով, անհարաժեշտ է ավելի շատ մեթոդական ու գործնական օգնություն ցուցաբերել: Վերջում ելույթ ունեցողը նշեց, մոտ ժամանակներս ինքը մասնակցել է ՀՀ վարչապետի մոտ ՀՀ Վերստուգիչ պալատի կողմից հանրապետության սոցծառայություններում իրականացված ստուգումների արդյունքների ներկայացմանը, որտեղ ամենաքիչ խախտումները արձանագրվել են Վայոց ձորի մարզում , ինչը վկայում է մարզպետարանի և համայնքապետարանների կանոնակարգված և նպատակասլաց աշխատանքի մասին:

Հայտարարություններ՝

1.'' 2016թ առաջին կիսամյակում մարզում իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն '' հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ՝ Ա. Հովսեփյանը: Նա նշեց, որ **.2016թ առաջին կիսամյակում** մարզի համայնքներում պետական և համայնքային բյուջեների , ''Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ../ԻՖԱԴ/.,,Բնության համաշխարհային հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղ..,,,Վերջին օրերի սրբեր բարեգործական կորպորացիայի.., ,,Ֆուլեր տնաշինական կենտրոն.. ԲՀԿ-ի միջոցներով իրականացվել է 2.165.520 հազար դրամի աշխատանքներ:Համայնքներում կառուցվել են ոռոգման և խմելու ջրագծեր, արոտավայրերում տեղադրվել են՝ խմոցներ, կառուցվել են ջրարբիացման համակարգեր, գազֆիկացվել է Մալիշկա գյուղը, Զառիթափ համայնքում հիմնանորոգվել է մանկապարտեզը, Վայք քաղաքում հիմնանորոգվել է ''Արևիկ..մարզադաշտը, բարեկարգվել է մարզադաշտին կից այգին, Եղեգնաձորում կառուցվում է Այցելությունների կենտրոն, իսկ Ջերմուկում ընթանում է Արփայի կիրճի հետիոտն ճեմուղու վերականգնման և բարեկարգման աշխատանքներ:

- 2.'' **Աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության 2016թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը '' հայտարարությամբ** հանդես եկավ աշխատակազմի կրթության, սպորտի և մշակույթի վարչության պետ Ա.Ղազարյանը, վերջինս նշեց, որ Վայոց ձորի մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, այդ թվում 14 հիմնական և 36 միջնակարգ, որոնցից 2-ը վարժարան: 2 ավագ դպրոց և 1 կրթահամալիր գործում են ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: 5 դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում, որոնցում սովորում է 317 աշակերտ: 5 դպրոցներ գտնվում են բարձր լեռնային բնակավայրերում:
    - Մինչև 50 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 16, որտեղ սովորող աշակերտների թիվը 360 - է:

- 50-100 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 13, որտեղ սովորողների թիվը 991 – է:
- 100 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների թիվը - 21

- Մարզի 50 դպրոցներում սովորում է 6373 աշակերտ, որից 797-ը ավագ դպրոցներում և կրթահամալիրում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 81 դպրոցահասակ երեխաներ ներառական կրթության ծրագրով ընդգրկված են Եղեգնաձորի թիվ 2, Ջերմուկի թիվ 1, Վայքի հիմնական և Ջերմուկի թիվ 3, Շատինի միջն. դպրոցներում, որտեղ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ այդ երեխաների կրթական կարիքներն ապահովելու համար:
- Մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:
- Բացվել և գործում են 24 նախակրթարաններ, որոնցից 14-ը դպրոցներում: Դպրոցներում գործող նախակրթարաններում ընդգրկվել է 162 երեխա:
- Դպրոցներում աշխատում են 1083 ուսուցիչներ, որոնցից 851-ը ունեն բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն (մոտ 80%-ը), մնացած 232-ը՝ միջնակարգ մասնագիտական:
    - ՈՒսուցիչ - աշակերտ հարաբերակցությունը կազմում է 1:6:
    - Դասարանի միջին խտությունը 13,5 - է:
    - Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 16,1 ժամ:
    - Մարզում գործում է 17 մանկապարտեզ 44 խմբով, որոնցում ընդգրկված է 1044 նախադպրոցական տարիքի երեխա: Նրաց հետ աշխատում են 85 դաստիարակներ:

Հաշվետու ժամանակաշրջանում սահմանված կարգով ձևավորվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների նոր կառավարման խորհուրդներ, որոնց անվանական կազմը 2016թ. մարտի 4-ին հաստատվել է Վայոց ձորի մարզպետի N 26 որոշմամբ:

Հինգ դպրոցներում (Ջերմուկի թիվ 1, Հերմոնի հիմնական, Ջերմուկի թիվ 3, Զառիթափի միջնակարգ դպրոցներ և Վայքի պետական վարժարան) սահմանված կարգով անցկացվել են գործադիր տնօրենի պաշտոնի համար մրցույթներ և ընտրվել են նոր տնօրեններ:

Հաջողությամբ իրականցվում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 1-4 րդ դասարանների երեխաները դպրոցում ստանում են սնունդ:

Սահմանված կարգով կազմակերպվում են նաև դպրոցներում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթները; Կիսամյակի ընթացքում անցկացվել է 13 ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ:

ԴՏՀՏՇՀ-ի կողմից մարզի 1-ին դասարանների աշակերտներին հատկացվել են ուսումնական պլանշետներ: Դրանց օգտագործման նպատակով վերապատրաստվել են 1-ին դասարաններում պարապող բոլոր դասվարները:

Փետրվար-մարտ ամիսներին անցկացվել է դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը: Մարզային փուլին 16

առարկաներից մասնակցել են 7-ից 12-րդ դասարանների 606 աշակերտներ, որոնցից 42–ը ստացել են հանրապետական փուլին մասնակցելու իրավունք: Հանրապետական փուլին մասնակցած աշակերտներից 8-ը արժանացել են դիպլոմների և գովասանագրերի:

Ժամանակին լրացվել և գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացվել միասնական քննությունների մասնակիցների դիմում-հայտերը: Հայտավորվել են բուհերի շուրջ 200 դիմորդներ, որոնք միասնական քննություններ են հանձնել Եղեգնաձորի ավագ դպրոցում տեղակայված քննական կենտրոնում: Դպրոցներում սահմանված կարգով անցկացվել են 9-րդ և 12-րդ դասարանների ավարտական քննությունները: Մարզային ենթակայության դպրոցներում 9-րդ դասարանն ավարտել են 424, իսկ 12-րդ դասարանը 370 շրջանավարտներ: 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններն ավարտած աշակերտների ավարտական փաստաթղթերն ստացվել և բաշխվել են դպրոցներին:

Ընթացքի մեջ է հերթական ատեստավորման համար ուսուցիչների վերապատրաստման դասընթացները որոնք անցկացվում են Կրթության ազգային ինստիտուտի Վայոց ձորի մասնաճյուղում:

Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվել է <<Կենգուրու>> միջազգային մաթեմատիկական և ընթերցանության մրցույթները, ինչպես նաև <<Ամենախելացին>> հեռուստատեսային մրցույթի ընտրության փուլը:

Ուսումնական պարապմունքներն ավարտվել են մայիսի 27-ին և այդ օրը դպրոցներում անցկացվել է <<Վերջն զանգ>> միջոցառումը, որին մասնակցել են նաև մարզպետարանի աշխատակիցներ և ՀՀ բանակի սպաներ:

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվել են հետևյալ միջոցառումները.

- Դպրոցականների շախմատի օլիմպիադա – եզրափակիչ փուլին մասնակցել է Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոցի հավաքական թիմը:
- Հայոց Մեծ եղեռնի սրբացված նահատակներին նվիրված հուշ-երեկո:
- Սպարապետ Վազգեն Սարգսյանի ծննդյան օրվան նվիրված միջոցառում, որն ավարտվել է շքերթով:
- ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ>> մրցույթ, որի հանրապետական փուլին մասնակցելու իրավունք է նվաճել Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզը:
- ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի տարածաշրջանային և մարզային փուլերը, որոնցում հաղթող 13 ընտանիքներ կմասնակցեն Ծաղկաձորում անցկացվող հանրապետական փուլին:

3. ,, 2016թ մարզի հողային հաշվեկշռի կազմման մասին ..

հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Մ. Մեսրոպյանը; Նա նշեց, որ հայտարարությունը հիմնականում վերաբերվում է 2016թվականի մարզի ընթացիկ հողային հաշվեկշիռը կազմելուն:

Համայնքների համար հողայի հաշվեկշռի կազմման ժամկետը մինչև հուլիսի 10-ն է , հողային հաշվեկշիռը մարզպետարանի աշխատակազմ այս պահին ընդամենը՝ 22 համայնք է ներկայացրել, մնացած համայնքները չեն ներկայացրել, խնդրեց ժամկետները պահպանել:

4. **,, Հայաստանի Հանրապետությունում լեյշմանիոզի դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների մասին,, հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Ս. Շահբազյանը**:Նա նշեց, որ 2016թ հունիսի 28-ին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից ստացվել ''Հայաստանի Հանրապետությունում լեյշմանիոզի դեմ պայքարի և կանխարգելման 2016թվականի ծրագիրը'' որն հաստատվել է ՀՀ առողջապահության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման և ՀՀ գյուղատնտեսության նախարարների համատեղ հրամանով: Թեև ծրագիրն համապատասխան շրջաբերականով ուղարկվել է մարզի համայնքների ղեկավարներին, սակայն հաշվի առնելով հիվանդության տարածման վտանգը, որը կատարվում է մլակների միջոցով: Բանախոսն առաջարկեց համայնքներում պահպանել սանիտարական նորմերը, ժամանակին կատարել աղբահանություն, թույլ չտալ օրգանական պարարտանյութերի կուտակումներ, պայքարել թափառող շների դեմ:

5.**,,Համայնքներում իրականացվող սոցիալական ծրագրերի մասին .. հայտարարությամբ հանդես եկավ Եղեգնաձորի զբաղվածության մարզային կենտրոնի տնօրեն Ժ.Սահակյանը**:Տնօրենը նշեց, որ մարզի երեք զբաղվածության տարածքային կենտրոններում գործազուրկ ընտանիքների և անձանց վիճակը թեթևացնելու նպատակով իրականացվում են 137 ծրագրեր, որի արժեքը կազմում է 47 մլն 950 հազար դրամ:Առաջարկեց համայնքների ղեկավարներին աջակցել կենտրոններին շահառուների թիվը ավելացնելու համար:

6.,,**Անասնաբուժասանիտարիայի, բուսասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության ոլորտի ծառայություն,, ՊՈԱԿ-ի կողմից մարզում իրականացված աշխատանքների մասին,, հայտարարությամբ հանդես եկավ ՊՈԱԿ-ի տնօրեն Խ.Եղյանը**: Վերջինս նշեց, որ ծառայության և համայնքների անասնաբույժների ուժերով մարզի 44 համայնքներում պահվող խոշոր և մանր եղջերավոր անասունների ու թռչունների շրջանում պետական պատվերի շրջանակներում իրականացվել են բրուցելոզի,դաբաղի,սիբիրախտի, ժանտախտի, էմկարի և պաստերլյոզի դեմ հետազոտություններ և պատվաստումներ:Խնդրեց համայնքների ղեկավարներին ծառայությանը ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն:

7.,, **ՀՀ Բնապահպանության նախարարության բնապահպանական տեսչության Վայոց ձորի տարածքային բաժնի 2016թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների մասին,, հայտարարությամբ**

հանդես եկավ ԲՊՏ Վայոց ձորի ՏԲ պետ Վ.Գրիգորյանը:Բաժնի կողմից որոշակի աշխատանքներ են կատարվել կենսառեսուրսների պահպանության ուղղությամբ; Բաժնի կողմից կազմակերպված ստուգայցերի ընթացքում նախորդ ամիսներին արձանագրվել են ապօրինի ծառահատման 3,ապօրինի ձկնորսության 5 դեպքեր: Ապօրինի ծառահատման համար 150 հազար դրամի չափով, իսկ ապօրինի ձկնորսության համար 250 հազար դրամի չափով քաղաքացիները ենթարկվել են վարչական տուգանքի:Ոստիկանության եղեգնաձորի բաժնի հետ համատեղ իրականացվել է ստուգայց, որի ընթացքում հայտնաբերվել է բեզոարյան այծի մեկ որսագողության դեպք: Բնությանը պատճառված 3 միլիոնի վնասը ամբողջությամբ վերականգնվել և մուտքագրվել է պետբյուջե:

8. **,,Վայոց ձորի անտառտնտեսություն,, մասնաճուղի 2016թ. առաջին կիսամյակի աշխատանքների մասին հաղորդում.. հայտարարությամբ հանդես եկավ մասնաճյուղի տնօրեն Մ. Հարությունյանը**: Վերջինս նշեց,որ 13 հազար հեկտարի վրա իրականացվել է անտառների պահպանություն,պարբերաբար իրականացվել են ստուգումներ, հայտնաբերվել է ապօրինի ծառահատման մեկ դեպք, կատարվել է հակահրդեհային ճանապարհի 6կմ հատվածի նորոգում:2016թ հուլիսի 3-ին և 4-ին անտառներում իրականացվել է ավիաքիմիական պայքար՝ հիվանդությունների և վնասատուների դեմ 1180հա-ի վրա:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանը հանդես եկավ եզրափակիչ խոսքով, վերջինս մարզխորհրդի մասնակիցներից շնորհակալություն հայտնեց կես տարվա համատեղ աշխատանքի համար և հույս հայտնեց, որ մարզխորհրդի անդամները 2016 թվականի մնացած ժամանակահատվածում կաշխատեն կրկնապատկված եռանդով և կհասնեն նոր նվաճումների, ինչի ականատեսը կլինենք ինն ամիսների արդյունքներով:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**